



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ Կ'ԱՅՑԵԼԷ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ
 ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ ԾԽԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ**

Կիրակի, Յունիս 17-ին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Բարձր. Ս. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան պիտի այցելէ Ֆրեզսօ եւ Ս. Պատարագ պիտի մատուցանէ Սուրբ Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ, եւ օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը պիտի փոխանցէ հաւատացեալներուն:

PRELATE TO VISIT HOLY TRINITY CHURCH IN FRESNO

This weekend H.E. Archbishop Moushegh Mardirossian will visit the Fresno parish where on Sunday, June 17, he will conduct Holy Mass and deliver the sermon.

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ
 «ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ» ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ**

Երեքշաբթի, 12 Յունիսի երեկոյեան, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Հայրը ընդունեց այցելութիւնը Առաջնորդարանի հովանիին տակ գործող «Նոր Ջուղայի Բարեկամներ» յանձնախումբը, որ եկած էր շնորհաւորելու Ազգ. Առաջնորդարանի նորակառոյց շէնքը, միաժամանակ՝ ծանօթացնելու իր նոր անդամները:

Յանձնախումբը Առաջնորդ Սրբազանին ներկայացուց իր աշխատանքներուն ընդհանուր պատկերը, ապա նաեւ ծանօթացաւ Ազգային Առաջնորդարանի նոր շէնքի բաժանմունքներուն ու ծառայական աշխատանքի դաշտերուն:



Հրաժեշտի պահուն, հիւր յանձնախումբը Առաջնորդ Սրբազանին իբրեւ նուէր յանձնեց Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքը պատկերող գեղանկար մը:

PRELATE WELCOMES THE FRIENDS OF NEW JULFA COMMITTEE TO THE PRELACY

On the evening of Tuesday, June 12, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed the Friends of New Julfa committee to the Prelacy. The visit served to familiarize the committee with the new building and also to introduce the new members to the Prelate.

The Prelate gave the members an overview of the work being carried out and of the different departments that comprise the Prelacy. The meeting concluded with the committee presenting the Prelate with an artwork depicting the Holy Savior Monastery of New Julfa.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ Կ'ԱՅՅԵԼԷ ՀԱՅ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐՈՒՆ

Թեմիս Առաջնորդ Սրբազան Հօր տնօրինումով, տարիներ է Վեր կանոնաւոր կերպով հոգեւոր սնունդ կը մատակարարուի Լոս Անճելըսի եւ շրջակայքի հայ բանտարկեալներուն:

Այս ծիրէն ներս, Շաբաթ, Յունիս 9-ի առաւօտուն, Թեմիս Առաջնորդ Սրբազանը այցելեց Wayside-ի NCCF բանտը: Առաջնորդ Սրբազանին կ'ընկերանային Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան, Ս. Խաչ Մայր Տաճարի հոգեւոր հովիւներ՝ Արժ. Տ. Նարեկ Քիւյ. Փեղիւանեան եւ Արժ. Տ. Աշոտ Քիւյ. Գամպուրեան, Բարեշնորհ Րաֆֆի Սրկ. Կարապետեան, Տիրացու Մանուկ Զուլեան, Ազգային Վարչութեան փոխ ատենապետ Տոքթ. Յակոբ Տեր Մկրտիչեան եւ Տիկ. Արաքսիա Վարդերեսեան:



Բանտի մուտքին, Առաջնորդ Սրբազանը դիմաւորուեցաւ բանտի պատասխանատուներուն կողմէ: Տեղի ունեցաւ եկեղեցական արարողութիւն, կատարուեցաւ խոստովանանք ու բաշխուեցաւ Ս. Հաղորդութիւն:

Արարողութեան աւարտին, Առաջնորդ Սրբազանը հայ բանտարկեալներուն փոխանցեց իր պատգամը եւ

քաջալերանքի խօսքը: Ան կոչ ուղղեց ներկաներուն, որ քալեն հոգեւոր ճանապարհէն, ըլլան մաքուր քրիստոնեաներ, դառնալու համար պարծանքը հայ ժողովուրդին եւ իրենց հարազատներուն:

Պատգամի աւարտին, բոլորը միասին ծնրադիր երգեցին »Տեր, ողորմեա՛ն: Յատուկ կարգադրութեամբ եւ արտօնութեամբ, այս առթիւ հայ բանտարկեալներուն հրամցուեցաւ հայկական ճաշ եւ քաղցրաւենիք, տրամադրուած Պապուրեան ընտանիքին կողմէ:

PRELATE VISITS ARMENIAN INMATES

On the morning of Saturday, June 9, the Prelate visited the North County Correctional Facility Wayside jail accompanied by Very Rev. Fr. Barthev Gulumian, Pastors of Holy Cross Cathedral Rev. Nareg Pehlivanian and Rev. Ashod Kambourian, Chaplain Raffi Garabedian, Stole bearer Manuk Chulyan, Executive Council Vice-Chair Dr. Hagop Der Megerdichian, and Mrs. Araksia Varteresian.

The Prelate and delegation were greeted upon their arrival at the facility by representatives of the Sheriff's Department who escorted them to a hall where the inmates were assembled. A service took place following which the inmates were offered Holy Communion. At the conclusion of services the Prelate delivered his spiritual message urging the inmates to sincerely pray to God for the forgiveness of their sins, to walk in the path of righteousness and to be good Christians to bring pride to the Armenian people and to their families.

At the conclusion of the Prelate's message, a traditional Armenian meal was offered. The visit concluded with the inmates expressing gratitude for the unforgettable occasion and for the spiritual nourishment that was offered to them.

ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԸ

Շաբաթ, 9 Յունիսի երեկոյեան, Էսսինոյի Ս. Նահատակաց եկեղեցւոյ «Աւետիսեան» սրահին մէջ, տեղի ունեցաւ Թեմիս Կիրակնօրեայ վարժարաններուն առաջին տարեկան ճաշկերոյթ խրախճանքը: Առաջնորդ Սրբազան Յօր հովանաւորութիւնը վայելող ձեռնարկը՝ կազմակերպուած էր Կիրակնօրեայ դպրոցներու ծնողա-օժանդակ յանձնախումբին կողմէ, եւ նախաձեռնութիւնն էր Կիրակնօրեայ դպրոցներու վարիչ մարմնին:

Իրագործուեցաւ պաշտօնական յայտագիր: Բարի գալուստի խօսք արտասանեց Յոգշ. Տ. Պարթեւ Կրդ. Կիլիմեան: Կիրակնօրեայ Դպրոցներու Առաքելութեան մասին խօսեցաւ Գերայ. Տ. Միւռն Ծ. Կրդ. Ազնիկեան: Ձեռամբ Առաջնորդ Սրբազան Յօր՝ գնահատագիրներ յանձնուեցան հինգ տարի եւ անելի տարիներ ծառայութիւն ունեցող ուսուցիչներուն եւ տեսուչներուն: Օրինութեան խօսք արտասանեց Առաջնորդ Սրբազանը: Ան գնահատեց Կիրակնօրեայ վարժարաններու անսակարկ գործունեութիւնը, ուսուցիչներուն եւ տեսուչներուն մատուցած հոգեւոր եւ հայեցի դաստիարակութիւնը, ծնողներուն սիրայօժար ներդրումն ու աշակերտներուն աննախընթաց եւ օրինակելի մասնակցութիւնը:

FIRST ANNUAL BANQUET OF PRELACY SUNDAY SCHOOLS

The Sunday Schools' Central Directorate organized its first annual banquet, which was held on Saturday, June 9, at "Avedissian" Hall in Encino,

under the auspices of the Prelate. Long serving teachers were honored for their service and dedication to our students. Christian Education Department Directors Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian were also in attendance along with parish pastors, delegates, Boards of Trustees, youth association members, Sunday School directors and teachers, and over 450 guests.

The evening began with the invocation by the Prelate followed by the collective singing of the Sunday School anthem. In his welcoming remarks Master of Ceremonies Very Rev. Fr. Barthev Gulumian briefly outlined the mission of our Sunday Schools. Very Rev. Fr. Muron Aznikian delivered the keynote speech in which he stressed the invaluable education and spiritual nourishment our youth receive at Sunday Schools, and subsequently invited the Prelate to present the awards to the teachers.

The Prelate, in his closing remarks and benediction, congratulated the directors and teachers and highly commended the work they undertake. He also congratulated the organizers of the banquet, and all those who contributed to its success, wishing them many more years of fruitful service.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԿԼԵՆՏԵՅԼԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԱՆԴԱՄ ՊԱՊ ԵՈՒՍԷՖԵԱՆԸ

Նախօրօք ճշդուած ժամադրութեամբ մը, Ուրբաթ, 8 Յունիսի յետմիջօրէին Ազգային Առաջնորդարան այցելեց Կլենտէյլի քաղաքապետական խորհուրդի անդամ Պապ Եուսէֆեան եւ ընդունուեցաւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի կողմէ: Հանդիպումին ներկայ եղան Ազգային Վարչութեան գանձապահ Տիար Վահան Պզտիկեան եւ ժողովականութեան այլ ներկայացուցիչներ:

Յարգելի հիւրը առաջին անգամ ըլլալով էր որ կ'այցելեր Ազգ. Առաջնորդարանի նորակառոյց շէնքը: Առաջնորդ Սրբազանն ու ժողովականները ընդհանուր գիծերու մէջ տեղեկութիւններ տուին հաստատութեան տարբեր բաժանմունքներուն, իրագործուած աշխատանքներուն ու յառաջիկայ ծրագիրներուն մասին: Խորհրդակցութեան նիւթ եղան նաեւ մեր գաղութի ու յատկապէս Կլենտէյլ քաղաքի շրջագիծին մէջ կարգ մը ծրագիրներ:

Պ. Եուսէֆեան գոհունակութեամբ ծանօթացաւ նոր շէնքին ու ծրագիրներուն, եւ պատրաստակամութիւն յայտնեց իր կարելիութեան սահմաններուն մէջ նպաստ բերելու Ազգային Առաջնորդարանին ու գաղութի ծրագիրներուն իրականացման:

PRELATE WELCOMES GLENDALE CITY COUNCIL MEMBER BOB YOUSEFIAN TO THE PRELACY

On the afternoon of Friday, June 8, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed Glendale City Council member Bob Yousefian

to the Prelacy. Executive Council Treasurer Mr. Vahan Bezdikian and community representatives were also present at the meeting.

Given that it was Mr. Yousefian's first visit to the new building, the Prelate and representatives outlined the different departments within the Prelacy and the various work being carried out as well as future plans. Mr. Yousefian in turn expressed his support of the Prelacy and his readiness to assist in the actualization of future activities.